ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

*Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներդրումները «Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա» ընկերության մեջ (Նախագծեր թիվ 25924 և 27657)*

*Բողոքներ թիվ 01 և 02*

«Լիդիան Ինթերնեշնլ Արմենիա» (Ամուլսար Գոլդ Փրոջեքթ) նախագծի մեջ ՄՖԿ-ի ներդրումների շուրջ

ՀԱՊԽ-ի հետաքննության մասով

ՄՖԿ-ի պատասխանի մշտադիտարկում

*Հոկտեմբերի 2, 2018թ.*

*Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի (ՀԱՊԽ/CAO) գրասենյակ*

**ՀԱՊԽ-ի մասին**

*ՀԱՊԽ-ի առաքելությունն է ծառայել որպես արդարացի, վստահելի և արդյունավետ անկախ ռեսուրսային մեխանիզմ, որի նպատակն է բարելավել ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի բնապահպանական և սոցիալական հաշվետվողականությունը:*

ՀԱՊԽ գործառույթը (Համապատասխանության ապահովման պաշտպան խորհրդականի գրասենյակը) անկախ օղակ է, որն անմիջականորեն զեկուցում է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊԽ-ը վերաքննում է Համաշխարհային բանկի խմբի երկու մասնավոր ճյուղերի՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ/IFC) և Բազմակողմանի ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ/MIGA) նախաձեռնած արդյունաբերական շինարարական նախագծերից ազդակիր համայնքների բողոքները:

ՀԱՊԽ-ի մասին ավելի մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.cao-ombudsman.org կայք:

**Բովանդակություն**

Ներածություն ..... 4
ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննությունը ..... 4
ՄՖԿ-ի ղեկավարության պատասխանը հետաքննությանը ..... 6
ՀԱՊԽ-ի մշտադիտարկման արդյունքները (2017թ. օգոստոսի– 2018թ. օգոստոս) ..... 7
Պատասխանը նախագծի մակարդակում ..... 7
Պատասխանը ՄՖԿ քաղաքականությունների, ընթացակարգերի, աշխատակարգերի կամ գիտելիքի մակարդակում ..... 12
Ամուլսարում տեղի ունեցած վերջին իրադարձությունները և բողոքաբերների տեսակետները ..... 12
Եզրակացություն ..... 15
Հավելված 1. Հետաքննության բացահայտումների ամփոփագիր ..... 17

## Ներածություն

ՀԱՊԽ-ի գրասենյակի համապատասխանության գործառույթի շրջանակներում հետաքննվում է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի բնապահպանական և սոցիալական (ԲԿՍ) կատարողականությունը՝ համապատասխան պահանջների կատարումն ապահովելու և կազմակերպությունների ԲԿՍ կատարողականությունը բարելավելու նպատակով:

Համապատասխանության հետաքննությունից հետո ՀԱՊԽ-ն մշտադիտարկում է ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ձեռնարկած գործողություններն այնքան ժամանակ, քանի դեռ ՀԱՊԽ-ին ցույց չեն տվել, որ համապատասխանության հետաքննության բացահայտումները հասցեագրված են:

ՀԱՊԽ-ի մշտադիտարկման գործառույթի շրջանակներում դիտարկվում են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի պատասխան քայլերը հետաքննության բացահայտումների առնչությամբ՝ երկու մակարդակներում.

a) ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ձեռնարկած կամ առաջարկած գործողությունները, որոնք ուղղված են նախագծի մակարդակում ՀԱՊԽ-ի բացահայտած խնդիրների լուծմանը.
b) ՄՖԿ/ԲՆԵԳ-ի ձեռնարկած կամ առաջարկած գործողություններ, որոնք ուղղված են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի քաղաքականությունների, ընթացակարգերի, աշխատակարգի կամ գիտելիքի մակարդակում ՀԱՊԽ-ի բացահայտած խնդիրների լուծմանը:

Վերլուծության առաջին մակարդակում նախատեսվում է հետագծել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի մոտեցման առաջխաղացումը նախագծի մակարդակում խնդիրների լուծման, իսկ երկրորդ մակարդակում՝ ԲԿՍ ռիսկերի նույնականացման և կառավարման հարցում:

Սա ՀԱՊԽ-ի առաջին մշտադիտարկման զեկուցագիրն է, որտեղ զետեղված է ՀԱՊԽ-ի գնահատականը Հայաստանում «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունում և վերջինիս Ամուլսարի ոսկու ծրագրի մասով ՄՖԿ-ի ներդրումների հետաքննության վերաբերյալ ՄՖԿ պատասխան քայլերին (համապատասխանության հետաքննություն):[1] Այս հաշվետվության մեջ արձանագրված է ՄՖԿ-ի պատասխանը՝ 2017 թվականի օգոստոսից մինչև 2018 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածում կատարված համապատասխանության հետաքննությանը:

## ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննությունը

Համապատասխանության հետաքննությունը վերաբերում է ՄՖԿ ներդրումներին «Լիդիան Ինթերնեշնլ» ՓԲԸ-ում (այսուհետ «ընկերություն») և Հայաստանի մայրաքաղաք Երևանից 170 կմ դեպի հարավ գտնվող նրա «Ամուլսար Գոլդ Փրոջեքթ» ոսկու արդյունահանման նախագծի մեջ:

ՄՖԿ-ն առաջին անգամ ներդրում արեց ընկերության մեջ 2007 թվականին՝ Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսների հողային տիրույթներում երկրախուզական գործողությունները և տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրությունները ֆինանսավորելու նպատակով: Այդ նախնական

[1] ՀԱՊԽ-ի հետաքննությունը, ՄՖԿ-ի պատասխանը և հարակից նյութերը կարելի է գտնել ՀԱՊԽ-ի կայքում: Տե՛ս https://goo.gl/xFJ1yy և https://goo.gl/6ndD2u:

ներդրմանը հաջորդեցին տասնմեկ լրացուցիչ ներդրումներ 2008-ից մինչև 2015թթ. ընթացքում: ՄՖԿ-ն ընդհանուր առմամբ 16.4 միլիոն դոլարի ներդրում է կատարել 2007 թվականից ի վեր և մինչև 2017 թվականի մայիս ամիսը բաժնետիրական կապիտալ է ունեցել ընկերությունում: 2015 թվականի դեկտեմբերին ընկերությունը հայտարարեց, որ «Ամուլսար Գոլդ Փորջեքթ» նախագծի համար համաձայնության է եկել երկու վարկատուների հետ՝ 325 միլիոն դոլարի շինարարական փաթեթի ներդրումային ծրագրի շուրջ: 2017 թվականի մայիսին ՄՖԿ-ն օտարեց իր բոլոր բաժնեմասերը և այժմ այլևս ընկերության մեջ ներդրում չունի:

Հիմք ընդունելով 2014 թվականի ապրիլին և հուլիսին հանքի հարևան համայնքների բնակիչների ներկայացրած երկու բողոքները՝ ձեռնարկվել է համապատասխանության հետաքննություն: Բողոքաբերները բարձրացրել են մի շարք բնապահպանական և սոցիալական խնդիրներ: Դրանք վերաբերում են շրջակա միջավայրի, մասնավորապես, ջրի, փոշու, սեյսմիկ վտանգների, ճառագայթման և կենսաբազմազանության վրա ծրագրի հետագա ազդեցությանը: Բարձրացվել են նաև սոցիալական ազդեցության խնդիրներ. մասնավորապես, հողի օտարման գործընթացի համարժեքություն, բացասական ազդեցություն զբոսաշրջության վրա հանքի հարևանությամբ գտնվող Ջերմուկ առողջարանային քաղաքում, սոցիալական ազդեցությունների ռիսկեր Գնդեվազ համայնքում (այդ թվում՝ համայնքի առողջություն, կենսապահովման միջոցներ, բարեկեցություն) և հանրային քննարկումների և շահագրգիռ կողմերի ներգրավման հետ կապված խնդիրներ: Ավելի ընդհանուր՝ բողոքաբերները պնդում էին, որ ՄՖԿ-ն չի հավաստիացել, որ ընկերությունը կատարում է ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական պահանջները:

Համապատասխանության հետաքննության արդյունքները հրապարակվել են 2017 թվականի ապրիլին: Բացահայտվել են ՄՖԿ-ի համապատասխանության ստուգման (due diligence) և ծրագրի վերահսկողության պահանջների՝ ինչպե՛ս կատարման, այնպես էլ չկատարման դեպքեր: Նախագծի մակարդակում ՀԱՊԽ-ն բացահայտել է հետևյալ խնդիրները, որոնք պետք է մշտադիտարկել.

- ՀԱՊԽ-ն պարզել է, որ Ջերմուկի՝ որպես զբոսաշրջային կենտրոն բրենդի վրա ազդեցության գնահատականի մասով առկա է անհամապատասխանություն.
- ՀԱՊԽ-ն պարզել է, Գնդեվազ ավանի բնակչության վրա ծրագրի ազդեցության գնահատականի մասով առկա է անհամապատասխանություն:

Հետաքննության շրջանակներում դիտարկվել են բողոքաբերների բարձրաձայնած մի շարք կոնկրետ բնապահպանական խնդիրներ: Այս հարցերի առնչությամբ[2] ՀԱՊԽ-ն պարզել է, որ վաղ կապիտալի ներդրման փուլում ՄՖԿ-ի վերահսկողությունը ծրագրի նկատմամբ բավարար չի եղել հավաստիանալու համար, որ ընկերությունն ի վիճակի է կատարելու թիվ 6 Կատարողականության չափորոշչի պահանջները կրիտիկական կենսամիջավայրերի մասով:[3] Բայցևայնպես, ՀԱՊԽ-ն պարզել է, որ ՄՖԿ-ի կողմից՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության միջազգային գնահատման (ԲՍԱԳ) գործընթացի ստուգման գործառույթը համարժեք է եղել ռիսկին:

[2] Համապատասխանության հետաքննության շրջանակում ներառվել են այնպիսի բնապահպանական հարցեր, ինչպիսիք են ստորգետնյա և մակերևութային ջրերի թունավորման ռիսկերը, սեյսմիկ վտանգը, ճառագայթման, թունավոր փոշու տարածման, հազվագյուտ և վտանգված տեսակների վրա ազդեցության ռիսկերը:

[3] ՄՖԿ, Կատարողականության չափորոշիչ 6. Կենսաբազմազանության պահպանում և կենդանի բնական պաշարների կայուն կառավարում/IFC Biodiversity Conservation and Sustainable Management of Living Natural Resources, 2012 - https://goo.gl/Q2B3xU

Հավելված 1-ում ամփոփ ներկայացված են 2017 թվականի օգոստոսի զեկուցագրում բացահայտված խնդիրները:

**ՄՖԿ-ի ղեկավարության պատասխանը հետաքննությանը**

2017 թվականի օգոստոսին հետաքննության զեկուցագրի հետ մեկտեղ հրապարակվել է ՄՖԿ-ի ղեկավարության պատասխանը:[4]

ՄՖԿ-ն իր պատասխանում շարադրել է մի շարք համակարգային բարելավումներ, որոնք իրականացվել են տվյալ ընկերությունում ՄՖԿ ներդրումների տարիներին, սակայն չի առաջարկել որևէ գործողություն հետաքննության միջոցով նախագծի մակարդակում բացահայտված խնդիրների հասցեագրման ուղղությամբ:

ՄՖԿ-ն իր պատասխանում ընդունում է ՀԱՊԽ-ի դիտարկումը վաղ կապիտալի ներդրման փուլերում ՄՖԿ-ի աշխատակիցներին ուղղորդելու օգտակարության վերաբերյալ: ՄՖԿ-ն հայտնել է, որ ֆորմալ հենքի վրա է դրել գործող պրակտիկան՝ այն շարադրելով բնապահպանական և սոցիալական գնահատման և փուլային ներդրումներով արդյունաբերական շինարարական նախագծերի վերահսկման ընթացակարգի ուղեցույցում (ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգ 13):[5] ՄՖԿ-ն նշել է, որ ԲՍՎԸ 13-ը վաղ ներդրումների փուլում գտնվող նախագծերի գնահատման և վերահսկման ավելի հստակ մեթոդական ուղեցույց է և հստակ ամրագրում է, որ ՄՖԿ-ի վաղ ներդրումային փուլում գտնվող նախագծերում պետք է հաշվի առնվեն տեղերում առկա փաստացի ռիսկերն ու ՄՖԿ ֆինանսավորման հետևանքները:

ՄՖԿ-ի պատասխանում նշվել է, որ ԲՍՎԸ 13-ի մոտեցումը համահունչ է 2007 թվականին Լիդիանում կատարված ներդրումների ժամանակ կիրառված ռիսկերի վրա հիմնված մոտեցմանը: Այդուհանդերձ, ՄՖԿ-ն ընդունել է, որ նախաներդրումային փուլում եղել են մի շարք թերացումներ, որոնք բացահայտվել են նաև ՀԱՊԽ հետաքննության ընթացքում, սակայն հայտնել է, որ այնուհետ ընկերությունը համարժեք քայլեր է ձեռնարկել ՄՖԿ պահանջների կատարումն ապահովելու համար:

Ինչ վերաբերում է ՀԱՊԽ-ի բացահայտած երկու հիմնական անհամապատասխանություններին, ՄՖԿ-ն հայտնել է, որ՝ (ա) աշխատել է ընկերության հետ, որպեսզի ավելի լավ գնահատի ծրագրի հնարավոր ազդեցությունները «Ջերմուկը որպես առողջարանային քաղաք» բրենդի վրա և բավարար ուշադրություն ապահովի զբոսաշրջության ոլորտին աջակցելու համար, և (բ) որ համամիտ չէ Գնդեվազի բնակչության վրա ծրագրի հնարավոր ազդեցությունների գնահատականի մասով ՀԱՊԽ-ի բացահայտած անհամապատասխանությանը:

Եվ վերջիվերջո, ՄՖԿ-ի պատասխանում նշված է, որ քանի որ Լիդիանը կարողացել է մասնավոր աղբյուրներից ֆինանսներ գրավել հանքաբացման աշխատանքների համար, ՄՖԿ-ն 2017 թվականի մայիսին դադարեցրել է իր ներդրումներն ընկերությունում և, այդ իսկ պատճառով, այլևս չի վերահսկում հանքաբացման աշխատանքները:

---

[4] ՄՖԿ-ի պատասխանը «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունում ՄՖԿ-ի ներդրումների վերաբերյալ ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության զեկուցագրին – https://goo.gl/VtBA2j:

[5] ՄՖԿ/ Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգեր, հոկտեմբեր 2016 - https://goo.gl/4QVu4Q:

**ՀԱՊԽ-ի մշտադիտարկման արդյունքները (2017թ. օգոստոսի– 2018թ. օգոստոս)**

Այս բաժնում ամփոփված է ՀԱՊԽ-ի մշտադիտարկման արդյունքները՝ ծրագրի մակարդակում, ինչպես նաև քաղաքականությունների, ընթացակարգերի, աշխատակարգերի և գիտելիքի մակարդակում կատարված հետաքննության միջոցով բացահայտված համապատասխանության խնդիրների լուծման համար ՄՖԿ-ի ձեռնարկած գործողությունների վերաբերյալ:

Այս բաժնում ներկայացված տեղեկությունների հիմքում ընկած են՝

- ՄՖԿ փաստաթղթերի ուսումնասիրությունը.
- ՀԱՊԽ-ին ՄՖԿ-ի ներկայացրած տեղեկությունները (2018թ. հունիս).
- ՀԱՊԽ-ի և բողոքաբերների քննարկումները (2018թ. Հուլիս և օգոստոս).
- ՀԱՊԽ-ին ընկերության ներկայացրած տեղեկությունները (2018թ. օգոստոս), և
- Հրապարակային տեղեկություններ, այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներում հրապարակված հոդվածներ և Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») մշտադիտարկման արդյունքները:[6]

Այս բաժնում նաև ամփոփված են Հայաստանի փոխված քաղաքական իրավիճակում Ամուլսարում տեղ գտած վերջին իրադարձությունները:

**<u>Պատասխանը նախագծի մակարդակում</u>**

ՄՖԿ-ն չի ներկայացրել ծրագրի մակարդակում համապատասխանության հետաքննության միջոցով բացահայտված խնդիրների հասցեագրմանն ուղղված որևէ գործողություն: Սա վերաբերում է բացահայտված հետևյալ խնդիրներին.

a) ՄՖԿ-ի և ընկերության մոտեցումը **Ջերմուկի «զբոսաշրջային կենտրոն» բրենդի վրա ազդեցության գնահատմանը.**
b) ՄՖԿ-ի և ընկերության մոտեցումը **Գնդեվազի բնակչության վրա ծրագրի ազդեցության գնահատմանը:**

ՄՖԿ-ն ՀԱՊԽ-ին հայտնել է, որ քանի որ դադարեցրել է իր ներդրումները Լիդիանում, հետևաբար այդ պահից սկսած որևէ էական շփումներ չի ունեցել ընկերության հետ կամ վերջինից չի ստացել ոչ հրապարակային որևէ տեղեկություն:

Հաշվի առնելով ՄՖԿ-ի կողմից գործողություններ չձեռնարկելու հանգամանքը՝ այս բաժնում ամփոփված են ՀԱՊԽ-ի եզրահանգումները, դրանց վերաբերյալ ՄՖԿ-ի պաշտոնական պատասխանը, հրապարակված տեղեկությունները և ընկերության տեսակետներն այդ խնդիրների վերաբերյալ:

***«Ջերմուկը որպես զբոսաշրջային կենտրոն» բրենդի վրա ծրագրի ազդեցության գնահատական***

<u>ՀԱՊԽ-ի հետաքննության արդյունքները</u>

[6] Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդը փորձագետների խումբ է, որը ձևավորվել է ընկերության կողմից Ամուլսարի ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականության մոնիտորինգ կատարելու համար: Ակնկալվում է, որ խորհուրդը տարեկան զեկուցագրեր է ներկայացնելու ծրագրի ԲԵՍ կատարողականության վերաբերյալ՝ սկզբնական երեք տարի ժամկետով (2017-2020): Տե՛ս http://www.amulsarpanel.com/:

ՀԱՊԽ-ի հետաքննությամբ պարզվել է, որ ՄՖԿ-ի վերահսկողությունը ԲՍԱԳ գործընթացի նկատմամբ՝ կապված «Ջերմուկը որպես առողջարանային քաղաք» բրենդի վրա ծրագրի հնարավոր ազդեցության հետ, համարժեք չի եղել ռիսկին:

ՀԱՊԽ-ն նշել է, որ քաղաքի ընկալման հետ կապված բացասական ազդեցությունն ընդունվել է որպես այցելուների թվի նվազմանը հանգեցնող հնարավոր գործոն: Այս համատեքստում անհրաժեշտ է վերլուծել ծրագրի ազդեցությունը զբոսաշրջության վրա: Թեև ՄՖԿ-ն համարժեք միջոցառումներ է ձեռնարկել, որպեսզի Ջերմուկն ընդգրկվի ծրագրի ազդեցության գոտում, սակայն ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ն չի ունեցել հավաստիացում, որ համարժեք գնահատում է կատարվել առ այն, որ ծրագրի ազդեցությունը կարող է բացասական հետևանք ունենալ «Ջերմուկը որպես զբոսաշրջային կենտրոն» բրենդի վրա: Հնարավոր ազդեցություններից են պայթեցման աղմուկը, տեսարանի փոփոխությունը և ընդհանուր ընկալումները, որոնք կարող են առաջանալ քաղաքին հանքի մոտ գտնվելու պատճառով:

<u>ՄՖԿ-ի պատասխանը</u>

Հետաքննության վերաբերյալ իր պաշտոնական պատասխանում ՄՖԿ-ն ընդունել է, որ «ԲՍԱԳ գործընթացում լիարժեք չեն դիտարկվել հանքի հնարավոր ազդեցությունները «Ջերմուկը որպես առողջարանային քաղաք» բրենդի վրա»:[7] Սակայն ՄՖԿ-ն չի կարծում, որ բրենդի վրա՝ միայն հանրության ընկալումների փոփոխության վրա հիմնված հնարավոր ազդեցություններին հնարավոր էր լիարժեք քանակական գնահատական տալ ԲՍԱԳ-ում: ՄՖԿ-ն հայտնել է, որ աշխատել է Լիդիանի հետ՝ հավաստիանալու համար, որ զբոսաշրջության ոլորտի աջակցմանը համարժեք ուշադրություն է դարձվում ընկերության հաղորդակցման ռազմավարության, տեղական իշխանությունների հետ աշխատանքի և համայնքի ներդրումային ռազմավարության միջոցով: Ուշադրություն է դարձվել համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, դրան գումարած՝ ջրի վրա հնարավոր ազդեցությունների մշտադիտարկմանը՝ անկախ երրորդ կողմի մասնակցությամբ:

<u>Խնդիրների կարգավիճակը</u>

2018 թվականի մայիսի զեկուցագրում Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդն[8] անդրադարձել է զբոսաշրջային կենտրոն Ջերմուկի վրա ծրագրի ազդեցության հարցին:

Խորհուրդն ընդունել է, որ Ջերմուկը Հայաստանի առաջնային ռեսուրսների վրա հիմնված զբոսաշրջային կենտրոններից է, և ուրվագծել է խորհրդին հայտնած մտահոգությունները՝ Ամուլսարի հանքավայրի քաղաքին մոտ գտնվելու հանգամանքի և տվյալ տարածաշրջանի զբոսաշրջային արժեքների հետ դրա համատեղելիության վերաբերյալ:

Խորհուրդը հայտնել է, որ «Ջերմուկ» ազգային պարկի զարգացմանն օգնելու ընկերության առաջարկը կարող է փոխակերպել այս գոտու զբոսաշրջային գրավչությունները, թեև խորհուրդը մտահոգություն է հայտնել դրա իրականացման դանդաղ տեմպի առնչությամբ: Խորհուրդը նաև նկատել է, որ Ջերմուկն ունի մի քանի լքված գոտիներ և ոչ գրավիչ հատկանիշներ: Այդուամենայնիվ, Ջերմուկի համայնքապետարանն ունի քաղաքի վերածննդի ծրագրեր, որ դարձնի այն ժամանակակից առողջարարական կենտրոն՝ հանքային ջրերով

[7] ՄՖԿ-ի պատասխանը «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունում ՄՖԿ ներդրումների համապատասխանության հետաքննության ՀԱՊԽ-ի զեկուցագրին - https://goo.gl/VtBA2j:

[8] Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդ, 2017-2018թթ. զեկույց, մայիս 2018թ. – https://goo.gl/KVGVzz:

բուժավայր և զբոսաշրջային կենտրոն, և խորհուրդը նշել է, որ ընկերությունը շատ բան է արել այս զարգացումներին նպաստելու և տնտեսական անկմանը հակազդելու ուղղությամբ:

Խորհուրդն այնուհետ նշել է, որ իր կարծիքով հանքը գտնվում է Ջերմուկից բավականին հեռու և բավականին ալիքաձև լանդշաֆտում, որ այցելուների մեծ մասի համար չառաջացնի զգալի աղմուկ կամ տեսարանի փոփոխություն:

Խորհուրդը նշել է, որ առկա է հանքն այս գոտում լրացուցիչ զբոսաշրջային գրավչություն դարձնելու հնարավորություն, որը կմեծացնի հետաքրքրությունը պատասխանատու հանքարդյունաբերության նկատմամբ և տեղեկություններ կտա, օրինակ, տեղի կենդանական և բուսական աշխարհի մասին: Բացի այդ, խորհուրդը նշել է, որ համամիտ է ԲՍԱԳ-ում Ջերմուկում ոսկու թեմատիկայով թանգարան հիմնելու՝ ԲՍԱԳ-ում արված առաջարկին, որտեղ կարող են ներկայացվել հանքավայրից պեղված հնէաբանական գտածոներ, ինչպես նաև արդյունահանման գործընթացը:

Ընկերությանն ուղղված իր առաջարկներում խորհուրդը նշել է՝ «Համաշխարհային բանկի Համապատասխանության պաշտպան խորհրդականը գնահատում է ծրագրի ազդեցությունը տեղական զբոսաշրջության զարգացման վրա և այն, որ Լիդիանը կարող է ցանկանալ աշխատել համապատասխան մարմինների հետ՝ տարածքում զբոսաշրջության նոր ռազմավարության համար ստեղծելով նախադրյալներ»:[9]

<u>Ընկերության տեսակետը</u>

Ընկերությունը ՀԱՊԽ-ին հայտնել է, որ կատարել է «Ջերմուկը որպես զբոսաշրջային կենտրոն» բրենդի վրա ծրագրի հնարավոր ազդեցությունների գնահատման ուղղությամբ առաջխաղացման փորձեր: Ընկերությունն ընդունել է, որ խնդիրներ կան զբոսաշրջության վերաբերյալ ելակետային տվյալների հավաքման առումով: Ընկերությունը դիտարկում է պատշաճ գնահատում կատարելու մի քանի տարբերակ, այդ թվում՝ այս հարցով միջազգային խորհրդատու ներգրավելու միջոցով: Այնուհետև ընկերությունը նշել է ամսվա կտրվածքով հյուրանոցների և վարձակալության տրվող բնակարանների գներն ու զբաղվածությունը մշտադիտարկելու ջանքերի մասին (երեք տարվա հանձնառություն), ինչը հանդիսանում է ծրագրին առնչվող հնարավոր ազդեցությունների ցուցիչ: Ընկերությունը նաև հայտնել է, որ ավելի քան 130.000 ԱՄՆ դոլարի ներդրում է կատարել լեռնադահուկային ենթակառուցվածքների կառուցումը գնահատելու, ինչպես նաև Ջերմուկում զբոսաշրջության զարգացման ծրագրեր կազմելու համար, նաև ավելի քան 2.5 միլիոն ԱՄՆ դոլար ներդրում է կատարել տեղական գնումների միջոցով՝ գնումները կատարելով ընկերության կապալառուներից, որոնք հիմնականում Ջերմուկից են:

<u>ՀԱՊԽ-ի գնահատականը ՄՖԿ-ի գործողություններին</u>

Ջերմուկի զբոսաշրջության վրա ծրագրի հնարավոր ազդեցությունների մասով Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհրդի դիտարկումներն առնչվում են ՀԱՊԽ-ի բացահայտումներին, և ընկերությունը հայտնել է, որ այժմ հնարավոր ազդեցությունները գնահատելու գործընթացում է: Այդուհանդերձ, ՄՖԿ-ն չի փորձել հավաստիացումներ ստանալ առ այն, որ ՀԱՊԽ-ի բացահայտած խնդիրներին լուծում են տրվել ծրագրում իր ներդրումները դադարեցնելուց հետո: Ըստ այդմ, ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ի պատասխանն այս բացահայտումներին անբավարար է:

[9] *Նույն տեղում*՝ էջեր 47 և 54:

*Գնդեվազ համայնքի վրա ծրագրի ազդեցությունների գնահատականի համարժեքությունը*

ՀԱՊԽ-ի հետաքննության արդյունքները

ՀԱՊԽ-ի հետաքննությամբ պարզվել է, որ ՄՖԿ-ն չի ունեցել հավաստիացում առ այն, որ Գնդեվազ համայնքի վրա ծրագրի ազդեցությունները ենթարկվել են համալիր գնահատման, որի շրջանակներում դիտարկվում են «համապատասխան բոլոր ԲԵՍ ռիսկերն ու ազդեցությունները», ինչը նախապայման է ԿՉ-1-ի պահանջ հանդիսացող մեղմացման պլանների մշակման համար:

ՀԱՊԽ-ն նշել է, որ ԲՍԱԳ-ում և հանքի կառավարման պլաններում այդ ազդեցությունները արծարծված կամ հասցեագրված են խելամտության շրջանակներում, և որ այդ առանձին գնահատականները համարվել են միջազգային խիստ չափանիշներին համապատասխան: Բացի այդ, ՀԱՊԽ-ն ընդունել է, որ հնարավոր են համայնքի համար դրական ազդեցություններ: Բայցևայնպես, ՀԱՊԽ-ն գտնել է, որ 2013 թվականից հետո ծրագրի հիմնարար փաստաթղթում կատարված փոփոխությունները Գնդեվազում հանգեցրել են և՛ դրական, և՛ բացասական ազդեցությունների զգալի ավելացման: Այս փոփոխությունները պահանջ էին առաջադրում կատարելու Գնդեվազի ողջ համայնքի բարեկեցության և դիմակայունության վրա ծրագրի տարբեր բաղադրիչների ընդհանուր կամ կուտակային ռիսկերի և ազդեցությունների գնահատում, որը պետք է ուղեկցվեր հանրային քննարկումներով, մեղմացման և մշտադիտարկման միջոցառումներով՝ ի լրումն ԲՍԱԳ-ում նշվածների:

ՀԱՊԽ-ն նաև բացթողումներ գտավ Կատարողականության չափորոշիչների մասով ՄՖԿ-ի մեթոդական ուղեցույցում՝ այն առումով, որ այնտեղ շարադրված չէ, թե ինչպես է ապահովվելու ծրագրի ընդհանուր կամ կուտակային ներգործությունների լիարժեք և համալիր գնահատումը:

ՄՖԿ-ի պատասխանը

Իր պաշտոնական պատասխանում ՄՖԿ-ն հայտարարել է, որ համամիտ չէ ՀԱՊԽ գնահատականին:[10] Այն նշել է, որ ՄՖԿ-ի մասնագիտական գնահատականով՝ ԲՍԱԳ-ում բավարար չափով հաշվի են առնված ազդեցությունները Գնդեվազի վրա, և իրականացվել է համալիր գնահատում, որտեղ հաշվի են առնվել տարբեր տեսակի ներգործությունները համայնքի տեսանկյունից, և որ դա արտացոլվել է կառավարման մի քանի պլաններում:

Այնուհետ ՄՖԿ-ն նկատել է, որ ծրագրի բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգը (ԲՍԿՀ) ներառում է մշտադիտարկման ծրագիր, որի միջոցով ակնկալվում է կանոնավոր մոնիթորինգի միջոցով գնահատել կառավարման բոլոր պլաններում ներառված մեղմացման միջոցառումների արդյունավետությունը: Նախատեսվում է արդյունքների մասին եռամսյակային կտրվածքով հայտնել համայնքին, իսկ իրականացման ընթացքի մասին՝ ընկերության բարձրաստիճան ղեկավարությանը:

Խնդիրների կարգավիճակը

2018 թվականի մայիսի զեկույցում Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդը[11] ներկայացրել է Գնդեվազի բնակիչների մտահոգություններն առ այն, որ հաճախ գյուղի դաշտերում փոշի է լինում, և նշել է, որ փոշու հարցն, ըստ ամենայնի, շարունակական խնդիր

[10] ՄՖԿ-ի պատասխանը ՀԱՊԽ-ի համապատասխանության հետաքննության զեկուցագրին, որը վերաբերում է «Լիդիան Ինթերնեշնլ» ընկերությունում ՄՖԿ ներդրումներին - https://goo.gl/VtBA2j:

[11] Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդ, տարեկան զեկույց 2017-2018թ., մայիս 2018թ. – https://goo.gl/KVGVzz:

է լինելու, քանի որ հանքի ենթակառուցվածքները մոտ են գտնվում գյուղին և հարակից դաշտերին ու այգիներին:

Խորհուրդն այնուհետ նշել է, որ որոշ դեպքերում փոշու վերաբերյալ բողոքները համարել է ցուցիչ՝ բնակիչների այլ խնդիրների կամ շահերի հասցեագրման համար, մասնավորապես, ընկերությանն ավելի շատ հող օտարելու ցանկություն, աշխատանք ունենալու կարիք, մտահոգություն ծիրանի գնորդների այն պնդումների շուրջ, թե միրգն ավելի կէժանանա հանքին մոտ գտնվելու հետևանքով և այլն: Խորհուրդը նշել է, որ ընկերությունը պետք է որ տեղյակ լիներ, որ փոշու խնդրի լուծումն ինքնին կլուծի Գնդեվազի բնակիչների բարձրաձայնած մի քանի այլ խնդիրներ ևս: Խորհուրդն առաջարկել է, որ ընկերության՝ համայնքի հետ աշխատող թիմը վերլուծի այս հիմնական շահերը, որի մասով փոշին օգտագործվում է որպես ցուցիչ, և մշակի ռազմավարություններ դրանցից յուրաքանչյուրի լուծման կամ մեղմացման համար: Ընկերությանն ուղղված իր առաջարկություններում խորհուրդը նշել է, որ՝ (ա) փոշին պետք է լինի հավանական մասնակցային մոնիթորինգի նախաձեռնության[12] առանցքը, և (բ) ընկերությունը պետք է օգնի տեղական համայնքներին իրենց ապագայի տեսլականի սահմանման գործընթացում՝ ինչպես արդյունահանման ընթացքում, այնպես էլ դրանից հետո:[13] Այս առնչությամբ խորհուրդը միանշանակ խորհուրդ է տալիս ընկերությանը շարունակել աշխատել տեղի բնակչության հետ և աջակցել նրանց սահմանելու, թե որը պետք է լինի տեղական համայնքի և հանքի համատեղ աշխատանքի հաջողության չափանիշն ի աջակցություն զարգացման:[14]

<u>Ընկերության տեսակետը</u>

Ընկերությունը հայտնել է ՀԱՊԽ-ին, որ առաջ է տարել ծրագրի Կենսապահովման վերականգնման պլանի (ԿՎՊ) միջոցառումները և որ շատ ծրագրեր են մշակվել Գնդեվազ համայնքի համար: Ընկերությունը հայտնել է, որ 2016-2018 թվականներին համայնքում կատարել է 925.000 դոլարի ներդրում,[15] մինչդեռ նույն ժամանակահատվածում նախատեսված էր տարեկան 140.000 դոլար հատկացում: Ընկերությունը նաև հայտնել է, որ հողի օտարման գործընթացի մասնակից տնային տնտեսությունների մոտ 80%-ն ուղղակիորեն օգտվել է ԿՎՊ տարբեր ծրագրերից, իսկ մյուսներն էլ օգտվել են՝ ստանալով աշխատանք և ներառվելով սոցիալական ծրագրերում:

<u>ՀԱՊԽ-ի գնահատականը ՄՖԿ-ի գործողություններին</u>

ՀԱՊԽ-ն նշում է, որ ՄՖԿ-ն չի առաջարկել Գնդեվազի բնակչության վրա հնարավոր հանրագումարային սոցիալական ազդեցությունների մասով հետաքննություններին բացահայտումներին ի պատասխան գործողություններ: ՀԱՊԽ-ի հետաքննության մեջ վերհանված մտահոգություններն հետագա զարգացում են ստացել Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհրդի զեկույցում, որտեղ նշվում է, որ փոշու հարցերը կարող են հանդիսանալ գյուղի ապագային և համայնքի վրա հնարավոր սոցիալական

---

[12] Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդ, 2017-2018 թթ. Տարեկան հաշվետվություն, էջ 26, մայիս 2018 – https://goo.gl/KVGVzz

[13] Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդ, 2017-2018 թթ. Տարեկան հաշվետվություն, էջ 48, մայիս 2018 – https://goo.gl/KVGVzz

[14] *Նույն տեղում:*

[15] Մինչ այժմ ներդրումներ են կատարվել հետևյալ բնագավառներում՝ գյուղական ենթակառուցվածքներ, լավագույն աշխատակարգեր և նոր տեխնոլոգիաներ գյուղատնտեսության, այգեգործության, անասնապահության զարգացման, պտուղ-բանջարեղենի վերամշակման և տեղական կառույցների՝ կոոպերատիվների զարգացման մեջ, ուսուցանվել են եկամուտների ստացման հմտություններ, իրականացված է բիզնեսի խթանում (22 փոքր բիզնեսներ Գնդեվազում), առողջապահական ծառայություններ և կրթություն:

ազդեցություններին վերաբերող մտահոգությունների հիմքում ընկած պատճառների ցուցիչ: Այդուհանդերձ, ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ի պատասխանն այս բացահայտմանն անբավարար է:

## Պատասխանը ՄՖԿ քաղաքականությունների, ընթացակարգերի, աշխատակարգերի կամ գիտելիքի մակարդակում

ՄՖԿ-ն ներկայացրել է քաղաքականությունների և ընթացակարգերի հետաքննությամբ բացահայտված խնդիրների լուծման քայլերը: Մասնավորապես, ՄՖԿ-ն հայտնել է, որ բարելավումներ են կատարվել վաղ փուլային ծրագրերի, ինչպիսին Լիդիանի ներդրումային ծրագիրն է, գնահատման և վերահսկման համար աշխատակիցների ուղղորդման իր ընթացակարգերում:

2016 թվականի հոկտեմբերին, որպես Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերի (ԲՍՎԸ) ձեռնարկի մաս, ՄՖԿ-ն թողարկել է նոր ընթացակարգային ուղեցույց, որտեղ նկարագրվում է ԲԵՍ մոտեցումը արդյունաբերական շինարարական նախագծերի փուլային ներդրումների վերաբերյալ:[16] ԲՍՓ 13-րդ ընթացակարգը նկարագրում է արդյունաբերական շինարարական փուլային նախագծերի մեջ ՄՖԿ ներդրումների ԲԵՍ գնահատման և վերահսկման գործընթացները: ԲՍՓ 13-րդ ընթացակարգի կարգավորման դաշտում է արդյունաբերական շինարարական ծրագրերի վաղ փուլում բաժնետիրական կապիտալում կատարվող ներդրումը, ինչպիսին է ՄՖԿ-ի ներդրումը Լիդիան ընկերությունում:

Համապատասխանության նախորդ մոնիթորինգների ժամանակ ՀԱՊԽ-ն քննարկել է ԲՍՓ 13-րդ ընթացակարգի հիմնական կողմերը:[17] ՀԱՊԽ-ն նկատել է, որ ԲՍՓ 13-րդ ընթացակարգի որոշակի բաղադրիչներում նշվում է ծրագրի դասակարգման, ԲԵՍ ռիսկի վերլուծության և մեղմման ավելի խիստ մոտեցում: ՀԱՊԽ-ն նկատել է նաև, որ ԲՍՓ 13-րդ ընթացակարգում հստակեցված չէ, թե ՄՖԿ մասնագետներն ինչպես պետք է անդրադառնան սկզբնական փուլի ներդրումներին՝ բնապահպանական և/կամ սոցիալական համատեքստի վիճարկման հարցում: Ընդհանրացնելով՝ ՀԱՊԽ-ն մտահոգություններ է հայտնել առ այն, որ ԲՍՓ 13-րդ ընթացակարգը շարադրված է որպես ՄՖԿ-ի փուլային ծրագրերի ֆինանսավորման մոդելի բացատրություն և չի անդրադառնում հանքաբացման վերաբերյալ օրինաչափ մտահոգություններին, որոնք ազդակիր համայնքները կարող են բարձրացնել նախաշինարարության փուլում: Ինչ վերաբերում է ՀԱՊԽ այն եզրահանգմանը, թե ՄՖԿ-ն բացթողումներ է ունեցել ուղղորդման հարցում առ այն, թե ինչպես պետք է ապահովել ծրագրի ընդհանուր կամ կուտակային սոցիալական ազդեցությունների լիարժեք և համալիր գնահատումը, ՄՖԿ-ն ՀԱՊԽ-ին չի հայտնել որևէ գործողության մասին:

## Ամուլսարում տեղի ունեցած վերջին իրադարձությունները և բողոքաբերների տեսակետները

### *Վերջին իրադարձությունները*

[16] ՄՖԿ, Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերի ձեռնարկ, 2016թ. հոկտեմբեր – https://goo.gl/Uc2Xqz.

[17] Տե՛ս ՀԱՊԽ-ի Համապատասխանության մշտադիտարկման զեկուցագիրը, Eco Oro, 2018թ. հունիս – https://goo.gl/XUoUKE

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսներին իշխանության դեմ բողոքի ակցիաների շնորհիվ 2018 թվականի մայիսին փոխվեցին Հայաստանի իշխանությունները: Այս իրադարձությունների շնորհիվ երկրում տեղի են ունենում քաղաքական մեծ փոփոխություններ՝ բարձրացնելով քաղաքացիական հասարակության ակտիվությունը: Երկրով մեկ տեղի էին ունենում ցույցեր և փակվում էին ճանապարհները՝ հիմնական ուղղված հանքարդյունաբերության ոլորտի, այդ թվում՝ Ամուլսարի հանքի դեմ: 2018 թվականի մայիսից մինչև օգոստոս մի քանի անգամ փակվել են Ամուլսարի ճանապարհները՝ թույլ չտալով, որ մեքենասարքավորումները մուտք գործեն հանքի տարածք: Ընկերությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ 2018 թվականի հունիսի 28-ի դրությամբ Ամուլսարի ճանապարհը 14 օր փակված է եղել:[18] Դրանից հետո ընկերությունը հայտնել է, որ ճանապարհները շարունակվել են փակված մնալ 2018 թվականի հուլիս ամսվա ընթացքում:[19]

Ըստ բողոքաբերների՝ բողոքի ակցիաներին մասնակցել են Վայոց ձորի մարզի Գնդեվազի, Ջերմուկի և Կեչուտի բնակիչները: Նրանք նաև պնդել են, որ բողոքի ակցիաներին մասնակցել են նաև Ամուլսարում աշխատող գնդեվազցիները:[20] Այլ աղբյուրներ հայտնել են, որ Լիդիանի աշխատակիցները բողոքի ակցիաներ են կազմակերպել Երևանում՝ պահանջելով ՀՀ կառավարությունից վերաբացել ճանապարհները: [21] 2018 թվականի մայիսին Ջերմուկի մի շարք տուր օպերատորներ իրենց աջակցությունն են հայտնել բողոքի ակցիաներին՝ կոչ անելով կառավարությանն ուշադրություն դարձնել զբոսաշրջության զարգացմանը, այս ոլորտում ուղղակի ներդրումներին, քանի որ Ջերմուկի զբոսաշրջային հնարավորությունները բավարար են գործազրկության խնդիրն ամբողջությամբ լուծելու համար՝ առանց հանքարդյունաբերությունը զարգացնելու անհրաժեշտության»:[22]

2018 թվականի հուլիսի 6-ին ՀՀ վարչապետն այցելել է հանք՝ ընկերության և բողոքողների ներկայացուցիչների ուղեկցությամբ: Այդ այցից հետո վարչապետը կոչ է արել կիրառել փաստերի վրա հիմնված մոտեցում և առաջարկել է «ձևավորել վստահելի եռակողմ մեխանիզմ՝ պետական պաշտոնյաների, բնապահպանների և «Լիդիան Արմենիա» ընկերության ներկայացուցիչների մասնակցությամբ [բնապահպանական չափանիշների ենթադրյալ խախտումները] հասկանալու համար»:[23] Նա նաև նշել է, որ նման գործընթացները պետք է իրականացվեն՝ երկու կարևոր հարցի վստահելի պատասխան տալու համար. արդյո՞ք հանքում տարվող աշխատանքներն ազդում են ջրային պաշարների որակի և Ջերմուկի՝ որպես առողջարանային քաղաք հետագա զարգացման վրա:[24]

---

[18] Տե՛ս Լիդիան Ինթերնեշնլ, «Լիդիանի հաշվետվությունները Ամուլսար տանող ճանապարհների վերջին ապօրինի փակման վերաբերյալ» 2018թ. հունիսի 28 - https://goo.gl/n1HVwo

[19] Տե՛ս Լիդիան Ինթերնեշնլ, «Lydian Provides Corporate Update», 2018թ. օգոստոսի 2 - https://goo.gl/HrT2gy

[20] Տե՛ս Էկոլուր, «Գնդեվազի բնակիչները փակել են Ամուլսար տանող ճանապարհները և պահանջում են դադարեցնել Ամուլսարի ծրագիրը» 2018թ. մայիսի 19 - https://goo.gl/DEyDED; Հետք «Երեք օր է՝ բնակիչները փակել են Ամուլսար տանող ճանապարհները», 2018թ. մայիսի 21 - https://goo.gl/cW1Aor; Էկոլուր «Ամուլսար տանող ճանապարհները փակած քաղաքացիները դիմում են ՀՀ վարչապետին», 2018թ. հունիսի 27 - https://goo.gl/L7YWkG

[21] Տե՛ս Արմենպրես, «Լիդիան Արմենիայի աշխատակիցները բողոքի ակցիա են իրականացնում կառավարության շենքի դիմաց՝ պահանջելով բացել Ամուլսար տանող ճանապարհը», 2018թ. հուլիսի 2 - https://goo.gl/nwVsnR; Մեդիամաքս, «Լիդիանի աշխատակիցները հավաքվել են կառավարության շենքի դիմաց» 2018թ. օգոստոսի 13 - https://goo.gl/cPuc43:

[22] Տե՛ս Հետք, «Ջերմուկի մի քանի առողջարաններ և հյուրանոցներ աջակցություն են հայտնում Ամուլսարի ծրագրի դեմ պայքարող բնակիչներին», 2018թ. մայիսի 22 - https://goo.gl/5jxvxp:

[23] Տե՛ս ՀՀ վարչապետի կայքը, «Վարչապետը հանդիպել է Ամուլսարի հանքի շահագործման դեմ պայքարող քաղաքացիներին և «Լիդիան Արմենիա»-ի ներկայացուցիչներին, 2018թ. հուլիսի 6 - https://goo.gl/hgsGKn:

[24] Տե՛ս Ազատություն, «Փաշինյանը կոչ է անում փաստերի վրա հիմնված որոշում կայացնել Ամուլսարի ոսկու հանքի վերաբերյալ», 2018թ. հուլիսի 6 - https://goo.gl/6PgR6f:

2018 թվականի օգոստոսի 2-ին ընկերությունը հայտնել է, որ հունիսի վերջից՝ փակված ճանապարհների և ընկերության ու վերջինիս կապալառուների՝ շինարարության տեղամաս մուտք գործելու անհնարինության հետևանքով ընկերությունը պայմանագրի դադարեցման ծանուցումներ է տվել աշխատուժի մոտավորապես 30%-ին (100 աշխատող): Բացի այդ, ընկերությունը հայտնել է, որ շինարարությունն իրականացնող բոլոր կապալառուները պարապ են եղել, ինչը բացասական է ազդել մոտ 1000 կապալառուի վրա:[25]

***Բողոքաբերների տեսակետը***

ՀԱՊԽ-ին ուղղված 2018 թվականի օգոստոսի տեղեկանքում բողոքաբերները հղում են կատարել Ամուլսարի հանքի շուրջ ծավալված վերջին իրադարձություններին և իրենց տեսակետն են ներկայացրել ծրագրի կարգավիճակի, ինչպես նաև ՀԱՊԽ-ի հետաքննության վերաբերյալ ՄՖԿ-ի և ընկերության պատասխանի վերաբերյալ:

Նախնառաջ, բողոքաբերները նշել են իշխանափոխությունից հետո Հայաստանում տեղի ունեցած մեծ փոփոխության և վարչապետի նշանակման մասին, որը մեծ ժողովրդականություն է վայելում: Ըստ բողոքաբերների, որոնք հղում են կատարել տարբեր հոդվածների,[26] այս փոփոխությունները հանգեցրել են բնապահպանական վտանգների մասով բնակչության մտահոգությունների մեծ ալիքի և կոչ են անում դադարեցնել երկար ժամանակ վիճարկվող հանքարդյունաբերական ծրագրերը, այդ թվում՝ Ամուլսարի ծրագիրը: Ի լրումն բարձրաձայնվող խնդիրների՝ բողոքաբերները հայտնել մի քանի դեպքերի մասին[27], որոնք ենթադրաբար տեղի են ունեցել Ամուլսարի ծրագրի շուրջ նախորդ տարիներին, օրինակ՝ Ամուլսարում իրականացվող շինարարական աշխատանքների հետևանքով Գնդեվազի խմելու ջրի ջրատարի աղտոտում և տեղի ձկնաբուծարանին հասցված վնաս,[28] և շինարարության տեղամասի առաջացրած փոշու մշտական առկայություն Գնդեվազում և Ջերմուկում:[29]

Երկրորդ՝ բողոքարկողները հղում են կատարել Ամուլսարի ծրագրի փորձաքննության արդյունքներին, որը պատվիրել էին շրջակա միջավայրի վրա ծրագրի հնարավոր ազդեցությունների մասով:[30] Նրանք նշել են, որ այս փորձաքննության արդյունքները հաստատել են բողոքաբերների այն մտահոգությունները, որ Ամուլսարի ծրագիրը Հայաստանի ջրերի թունավորման լուրջ սպառնալիք է ներկայացնում, և որ որևէ հավաստի երաշխիքներ չկան, որ հետագա բացասական ազդեցությունները կմեղմվեն: Նրանք այնուհետ մեղադրել են ընկերությանն այն հարցում, որ փորձագետների պնդումները կոնտեքստից դուրս են վերցվել և փորձաքննության եզրակացությունները սխալ են մեկնաբանվել: Նրանք ավելացրել են, որ ընկերությունը ագրեսիվ հաղորդակցային արշավ է իրականացրել ծրագրի ընդդիմադիրների դեմ: Ի պատասխան այս մեղադրանքների ընկերությունը հայտարարություն է տարածել,[31] որտեղ լրացուցիչ տեղեկություններ է ներկայացրել թթվային ապարների դրենաժի (ԹԱԴ)

---

[25] Տե՛ս Լիդիան Ինթերնեշնլ, «Լիդիանը պաշտոնական տեղեկատվություն է տալիս», 2018թ. օգոստոսի 2 - https://goo.gl/HrT2gy:

[26] Տե՛ս Եվրասիանեթ, «Հանքի շուրջ վեճը սպառնում է Հայաստանում ձեռք բերված հետհեղափոխական կոնսենսուսին», 2018թ. հուլիսի 24 - https://goo.gl/YPpnwM և EVN Report, «Ամուլսար. Ոսկի, թե՞ ջուր"Amulsar», 2018թ հուլիսի 3- https://goo.gl/6Qsh69:

[27] Տե՛ս Լիդիան Արմենիա, «Ջրագծի վթար շինարարական աշխատանքների ընթացքում» 2018թ. փետրվարի 7 - https://goo.gl/wEseyT

[28] Տե՛ս սիրողական տեսանյութը https://goo.gl/9ZSudQ:

[29] Տե՛ս Armecofront, Youtube տեսանյութ, 2018թ. ապրիլի 30 - https://goo.gl/DdjQR6:

[30] Տե՛ս Armecofront, «Ամուլսար. Միջազգային հայտնի փորձագետների եզրակացություններ» - https://goo.gl/7PpyWa:

[31] Տե՛ս Լիդիանի նամակը Պրն. Հարի Բրոնզոյանին, 2017թ. նոյեմբերի 1 - https://goo.gl/ou97HP:

ադապտիվ կառավարման մասով ընկերության մոտեցման վերաբերյալ,[32] ինչպես նաև մանրամասն դիտողություններ է ներկայացրել բողոքաբերների կողմից պատվիրված փորձաքննությունների վերաբերյալ:[33]

Բողոքաբերները նաև իրենց դժգոհությունն են հայտնել ՀԱՊԽ-ի 2017 թվականի հետաքննության զեկուցագրի որոշ մասերի, մասնավորապես բնապահպանական խնդիրների մասով համապատասխանության ապահովման գնահատականի առնչությամբ՝ համարելով, որ ՀԱՊԽ-ը տեղեկատվական ընդգրկուն աղբյուրների, այդ թվում՝ բողոքաբերների կողմից պատվիրված ուսումնասիրությունների վրա հիմնվելու փոխարեն չափազանց շատ է տուրք տվել ընկերության տվյալների մեկնաբանությանը:

Եվ վերջում՝ Ջերմուկի բրենդի վրա ծրագրի հավանական ազդեցության և Գնդեվազի բնակչության վրա ազդեցության գնահատման վերաբերյալ ՀԱՊԽ բացահայտումների առնչությամբ բողոքաբերները հայտնել են, որ՝ (ա) Ջերմուկի վրա ազդեցության որևէ հետագա գնահատում չի կատարվել և/կամ հրապարակայնորեն չի ներկայացվել տեղացի և ազգային շահագրգիռ կողմերին, և (բ) Գնդեվազի վրա ազդեցության առնչությամբ որևէ քայլ չի ձեռնարկվել, չնայած վերը նշված մի քանի դեպքերի:

## Եզրակացություն

ՀԱՊԽ-ի բացահայտումներին ՄՖԿ-ն պատասխան չի ներկայացրել նախագծի մակարդակում՝ նշելով, որ ՄՖԿ-ն 2017 թվականի մայիսից դադարեցրել է ներդրումներն ընկերությունում և հետևաբար ընկերության հետ որևէ էական շփումների մեջ չի եղել:

ՀԱՊԽ եզրահանգումների մասով կարևոր է այն, որ Ամուլսարի անկախ խորհրդատվական խորհուրդն ընդունել է Գնդեվազի համայնքի, ինչպես նաև Ջերմուկի՝ որպես զբոսաշրջային կենտրոն ապագայի վրա ծրագրի ազդեցության վերաբերյալ մտահոգությունները: Ընկերությունը ՀԱՊԽ-ին հայտնել է, որ ընթացքի մեջ է զբոսաշրջային կենտրոն Ջերմուկի վրա ծրագրի հնարավոր ազդեցության գնահատումը, ինչպես նաև որ ընկերությունը մշտադիտարկում է ազդեցությունները Գնդեվազ համայնքի վրա:

Ինչպես ՀԱՊԽ-ին հաղորդել էին բողոքաբերները, իրենց կարծիքով ընկերության պատասխանը հետաքննությանը բավարար չի եղել: Նրանք նշել են, որ ծրագրի նկատմամբ դիմադրությունն ուժգնանում է, ինչպես նաև որ Գնդեվազ գյուղում և Ջերմուկ քաղաքում արդեն իսկ տեղ են գտել ծրագրով պայմանավորված մի շարք ազդեցություններ: Նրանք պնդում են, որ ընկերությունը որևէ գործողություն չի ձեռնարկել ի պատասխան այս դեպքերի, ինչպես նաև չի անդրադարձել Գնդեվազի և Ջերմուկի վրա ազդեցությունների ՀԱՊԽ-ի հետաքննության բացահայտումներին:

Թեև նկատի են առնված բողոքաբերների շարունակական մտահոգությունները կապված ծրագրի ազդեցության և բացահայտված խնդիրների մասով ընկերության կողմից տարվող աշխատանքների վերաբերյալ, ՀԱՊԽ-ի լիազորությունների դաշտում չէ այն միջոցառումների համարժեքության վերաբերյալ եզրակացություն տալը, որին ՄՖԿ-ն չի մասնակցում:

---

[32] Լիդիան Ինթերնեշնլ, Ամուլսարի ոսկու հանք, Լրացուցիչ մանրամասներ ԹԱԴ-ի ադապտիվ մոտեցման վերաբերյալ, 2017թ. հոկտեմբեր – https://goo.gl/vv46XE:

[33] Լիդիան Արմենիա, Ամուլսարի ոսկու հանք, Պատասխան պրն. Հ. Բրոնզոյանի համար պատրաստված զեկույցին, 2017թ. օգոստոսի 18 – https://goo.gl/b7Avpd:

Քաղաքականությունների, աշխատակարգերի, ընթացակարգերի և գիտելիքի մակարդակում ՄՖԿ-ն հայտնել է, որ նախկինում բարելավել է աշխատակիցների ընթացակարգային ուղղորդումը վաղ փուլային այնպիսի ծրագրերի գնահատման և վերահսկման հարցերում, ինչպիսին Լիդիանն է, և դա իրականացրել է 2016 թվականի հոկտեմբերին հրապարակված՝ արդյունաբերաշինարարական նախագծերի փուլային ներդրումների մասով ՄՖԿ-ի Բնապահպանական և սոցիալական վերաքննության 13-րդ ընթացակարգի միջոցով:[34] Սակայն ՀԱՊԽ-ն նշում է, որ որևէ գործողություն չի առաջարկվել կամ չի ձեռնարկվել՝ լուծում տալու ՄՖԿ-ի ուղղորդման թերացումներին առ այն, թե ինչպես ապահովել ծրագրի ընդհանուր կամ կուտակային սոցիալական ազդեցությունների լիարժեք և համալիր գնահատումը, ինչի մասին նշվել էր ՀԱՊԽ հետաքննության զեկուցագրում:

Ընդհանուր առմամբ, ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ի պատասխանը համապատասխանության ապահովման հետաքննությանը միայն մասամբ է անդրադարձել համակարգային մակարդակում արված բացահայտումներին, և չի անդրադարձել նախագծի մակարդակում արված բացահայտումներին: Բայցևայնպես, ՀԱՊԽ-ն որոշել էր փակել Լիդիանում ՄՖԿ-ի ներդրումներին վերաբերող երկու գործերն էլ՝ հաշվի առնելով, որ ՄՖԿ-ն որևէ ընթացիկ ներդրում այդ ընկերությունում չունի և ՄՖԿ-ն ունի որոշում՝ չմասնակցել նախագծի մակարդակում որևէ պատասխան գործողությունների իր նախկին հաճախորդի կամ բողոքաբերների հետ:

[34] ՄՖԿ, Բնապահպանական և սոցիալական վերաքննության ընթացակարգերի ձեռնարկ, 2016թ. հոկտեմբեր -2 https://goo.gl/Uc2Xqz:

## Հավելված 1. Հետաքննության բացահայտումների ամփոփագիր

| ՄՖԿ-ի գնահատումը և վերահսկումը | |
|---|---|
| Բ&Ս նախաներդրումային վերաքննությունը | <u>ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի բավարարել ռիսկի համարժեքության չափորոշիչին:</u><br>Հաճախորդից Բ&Ս տեղեկույթի և ՄՖԿ-ի Բ&Ս մասնագետի կողմից տեղում այցելության բացակայության պայմաններում, տեղին կլիներ Ամուլսարում Բ&Ս ռիսկերի փորձագիտական ամփոփումը: ՀԱՊԽ նաև նշում է, որ ՄՖԿ-ն գերագնահատել է հաճախորդի ղեկավարության պատրաստակամության հայտարարությունները: Հաշվի առնելով նախագծի բարդությունը, հաճախորդի կարողությունների մեջ ճանաչված թերությունները, և նրա մոտ Բ&Ս տեղեկությունների պատմական գրանցման պակասը, համապատասխան կլիներ ավելի մանրամասն և կառուցվածքային Գործողությունների ծրագիրը: |
| | <u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի Բ&Ս վերաքննությունը չի համապատասխանել Կայունության քաղաքականության պահանջներին (2006թ/) պարբ. 17:</u><br>ՄՖԿ-ի Բ&Ս նախաներդրումային վերաքննության մեջ տեղ գտած թերությունների արդյունքում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն բավարար հիմքեր չի ունեցել եզրակացնելու, որ ընկերությունը ի վիճակի կլինի համապատասխանել ՄՖԿ-ի բոլոր պահանջներին մինչև 2008թ., ինչպես ներկայացված է եղել Խորհրդին: |
| | <u>ՄՖԿ-ի նախնական ներդրումի ենթատեքստում, ՀԱՊԽ-ը գտնում է, որ նախագծին "B" կատեգորիա տալը համապատասխան է եղել:</u> |
| Վերահսկումը | <u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի երկրախուզական գործողությունների վերահսկումը 2007–13թթ. ժամանակահատվածի ընթացքում համապատասխանության երաշխիքներ չի տվել: Այդ ժամանակահատվածի ընթացքում նախագծի մեջ լրացուցիչ ներդրումներ կատարելու ՄՖԿ-ի պատրաստակամությունը անհամատեղելի է եղել Կայունության քաղաքականության այն պահանջի հետ, որով ՄՖԿ-ն պետք է ուղղիչ միջոցներ դիտարկի ի պատասխան ընթացիկ անհամապատասխանությունների:</u><br>ՄՖԿ-ն արդյունավետորեն չի վերահսկել հաճախորդի կողմից մի քանի կրիտիկապես կարևոր ԲՍԳԾ պահանջների կատարումը 2007–13թթ: ընթացքում: Մասնավորապես, երկրախուզական գործողությունների համար ԲՍԿՀ մշակելու և անկախ ԱԱԲՀ աուդիտներ իրականացնելու պահանջները: Այս ժամանակահատվածի ընթացում նախագծի նկատմամբ ՄՖԿ-ի կողմից վերահսկման թերությունները նպաստեցին երկրաբանական հետախուզության աշխատանքների ընթացքում տեղ գտած անցանկալի ազդեցություններին: Եվ միայն 2013թ. ՄՖԿ-ն հստակեցրեց ընկերության առաջ, որ հետագա ներդրումները կախված են լինելու երկրախուզական փուլի գործունեության համար համապատասխան ԲՍԿՀ մշակելու նախապայմանից: |
| | ՄՖԿ-ի կողմից նախագծի վերահսկումը նշանակալիորեն բարելավվեց 2013թ.-ից հետո: Արդյունքը եղավ հաճախորդի Բ&Ս Կատարողականության մակարդակի հստակ բարելավումը, մասնավորապես, երկրախուզական փուլի ԲՍԿՀ մշակելու միջոցով: ՀԱՊԽ գտնում է, որ այդ պահից ի վեր, հաճախորդի |

| | |
|---|---|
| | երկրախուզական գործողությունների նկատմամբ ՄՖԿ-ի վերահսկումը տվել է համապատասխանության ադեկվատ երաշխիքներ: |
| **Բնապահպանական հարցերը** | |
| Գրունտային ջրերի աղտոտման հատկորոշ ռիսկերը, որոնք կարող են ազդել Ջերմուկի “առողջարանային” ջրերի (թերմալ աղբյուրների) վրա, և աղտոտման ուժեղացած ռիսկը հանքափոսերից և այլ պայթեցման գործողություններից առաջացած գրունտային ճաքերի պատճառով | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված գրունտային ջրերի պոտենցիալ աղտոտման հետ, համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան կետերի զարգացմանը: |
| Ջրի աղտոտման ռիսկերը Վորոտան և Արփա գետերի, Կեչուտ և Վորոտան ջրամբարների, ինչպես նաև Սևանա լճի ջրաբաժանի ավազաններում կատարվող հանքահանության գործողությունների պատճառով | ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը կապված ջրերի պոտենցիալ աղտոտման հարցերի հետ համարժեք է եղել ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը: |
| Կույտային տարալվացման հարթակին (ԿՏՀ) սպառնացող սեյսմիկ ռիսկերը: | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված պոտենցիալ սեյսմիկ ռիսկերի հետ համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը: |
| Հանքահանված ապարների մեջ ուրանի ներկայության հավանականությունից բխող պոտենցիալ ռիսկերը, որոնք կարող են լայնածավալ ճառագայթային աղտոտման պատճառ դառնալ և լրացուցիչ ճառագայթման ռիսկերը ռադոնից: | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն ճառագայթային աղտոտման հետ կապված կատարել է համապատասխան քայլեր՝ ԲՍԱԳ գործընթացը վերահսկելու համար: |

| | |
|---|---|
| Գյուղատնտեսական հողերի և Գնդեվազ գյուղի վրա աղտոտված փոշու տարածման ռիսկերը կախված քամիների գերակշռող ուղղությունից: | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից հաճախորդի միջազգային ԲՍԱԳ-ի վերաքննությունը՝ կապված աղտոտված փոշու տարածման պոտենցիալ ազդեցությունների հետ համարժեք է ռիսկին և արդյունքում հանգեցրել է Գործողությունների ծրագրի մեջ համապատասխան կետերի մշակմանը: |
| Կենսաբազմազանությունը և Հայաստանի “Կարմիր գրքում” գրանցված բուսական և կենդանական տեսակների ներկայությունը: | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից կենսաբազմազանության առնչությամբ 2007թ.–13թթ. ընթացքում նախագծի ռիսկերի վերաքննությունը և վերահսկումը անբավարար են եղել:<br>ՄՖԿ-ն երաշխիքներ չուներ առ այն, որ հաճախորդը կարողություն ուներ կրիտիկական բնակության միջավայրերի առնչությամբ ԿՉ6-ի պահանջները բավարարելու համար:<br>Հայաստանի բնապահպանական թույլատվության գործընթացին օգնելու համար նախաձեռնված մեկնարկագծային ուսումնասիրությունները չբավարարեցին միջազգային որակի ԲՍԱԳ-ի կարիքներին: Դա ուղղվեց 2010թ. վերջին միջազգային ԲՍԱԳ-ի խորհրդատուների մասնակցության շնորհիվ, ինչից հետո միայն մեծապես ակնհայտ դարձավ կենսաբազմազանության վրա ազդեցությունների նշանակությունը, ներառյալ նաև երկրաբանական հետախուզության աշխատանքների ժամանակ:.<br>Այս ենթատեքստում, ՄՖԿ-ն դիտարկել է, որ 2013թ. հաճախորդի երկրախուզական գործողությունները բացասական ազդեցություն են ունեցել՝ ծայրահեղ վտանգված, Potentilla porphyrantha - մատնունի ծիրանավոր, բուսատեսակի պոպուլյացիայի 1-ին կարգի կրիտիկական բնակության միջավայրի համար: |
| | ՀԱՊԽ-ը գտնում է, որ 2013թ,-ից հետո ժամանակահատվածում ՄՖԿ-ի վերահսկումը համարժեք է եղել ռիսկին և հանգեցրել է Գործողությունների ծրագրում համապատասխան դրույթների զարգացմանը, որոնք նախագծված են կենսաբազմազանության վրա նախագծի պոտենցիալ ազդեցությունները նվազագույնի հասցնելու, մեղմացնելու և փոխհատուցելու համար, ինչպես պահանջվում է Կատարողականության չափորոշիչներով: |
| | Երբ վտանգված տեսակների վրա ազդեցությունները ճանաչվեցին, ՄՖԿ-ն արձագանքեց կենսաբազմազանության գնահատումների և Գործողությունների ծրագրերի պահանջով, ինչը պահանջվում է ԲՍԱ-ի գործընթացի մաս հանդիսացող ԿՉ6-ով: |
| | |
| **Սոցիալական հարցերը** | |
| Հողի օտարման և կենսապահովման միջոցների վերականգնումը | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց ԿՉ5-ի հիմնական պահանջները բավարարելու համար:<br>ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ՝ հողի օտարման մոտեցման մեջ գործընթացի սկզբում ճանաչված հաճախորդի թերությունները հասցեագրելու ուղղությամբ, կենտրոնանալով այնպիսի արդյունքների վրա, որոնք համատեղելի են ԿՉ5-ի նպատակների հետ: |

| | |
|---|---|
| | ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը համապատասխանության հիմնավոր երաշխիքներ տվեց ԿՉ5-ի խոհրդակցության և հրապարակման պահանջների հետ:<br>ՄՖԿ-ն ճանաչեց ավելի ուժեղ խոհրդակցության կարիքը 2013 և 2014թթ., ներառյալ հողի օտարման կապակցությամբ: ՄՖԿ-ն աշխատեց հաճախորդի հետ այս հարցերը իր վերահսկման մեջ հասցեագրելու ուղղությամբ, ներառյալ հողի օտարման գործընթացի նկատմամբ անկախ աուդիտի միջոցով, որն իրականացվեց 2015թ., և եզրակացրեց, որ խոհրդակցության և հրապարակման պահանջները բավարարվել են: |
| Ազդեցությունները Ջերմուկի տուրիզմի վրա | ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից ԲՍԱԳ գործընթացի վերահսկումը կապված Ջերմուկի, որպես առողջարանային քաղաք բրենդի, վրա նախագծի պոտենցիալ ազդեցության հետ, համարժեք չի եղել ռիսկին:<br>Ընդունվել է, որ քաղաքի ընկալման վրա անցանկալի ազդեցությունները կարող են հանգեցնել քաղաքի տուրիստական այցելուների թվի  կրճատմանը: Այս ենթատեքստում, պահանջվում էր նախագծի ազդեցության վերլուծությունը տուրիզմի վրա: Թեև Ջերմուկը ի սկզբանե չէր դիտարկվում որպես նախագծի ազդեցության տարածքի մասը, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան միջոցներ է ձեռնարկել երաշխավորելու համար, որ դա այդպես լինի հաճախորդի կողմից միջազգային ԲՍԱԳ-ի պատրաստման ժամանակ: Սակայն, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ն երաշխիքներ չունի առ այն, որ ազդեցությունները, որոնք կարող են ազդել Ջերմուկի բրենդի վրա, որպես տուրիստական կենտրոնի — ինչպես օրինակ պայթյունների աղմուկը, տեսողական խանգարումները, և ավելի ընդհանուր ընկալումները, որոնք բխում են քաղաքին նախագծի մոտիկության հանգամանքից — համապատասխանաբար գնահատվել են |
| Գնդեվազ գյուղի վրա ազդեցությունների  գնահատման համապատասխանությունը | <u>ՀԱՊԽ-ն գտնում է, որ ՄՖԿ-ին պակասում են երաշխիքները առ այն, որ նախագծի ազդեցությունները Գնդեվազի համայնքի վրա ենթարկվել են ինտեգրված գնահատման, որը դիտարկել է “բոլոր կապակցված Բ&Ս ռիսկերը և ազդեցությունները”, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով: Սա մեղմացման ծրագրերի զարգացման նախապայմանն է, ինչպես պահանջվում է ԿՉ1-ով.</u><br>ՀԱՊԽ-ը թերություններ է գտնում ԲՍԱԳ-ի գործընթացը վերահսկելու ՄՖԿ-ի մոտեցման մեջ՝  Գնդեվազի բնակչության ռիսկերի և մտահոգությունների և ընդհանրապես հանքի զարգացման պոտենցիալ միավորված ազդեցությունների նկատմամբ, համայնքի առողջության/լավ ինքնազգացումի և դիմադրողականության առնչությամբ:<br>ԲՍԱԳ-ը և կառավարման ծրագրերը  առանձին վերցված դիտարկել կամ հասցեագրել են այս ազդեցություններից |

| | |
|---|---|
| | շատերը, և ԱԱԳ-ը, էկոհամակարգային ծառայությունների վերաքննությունը, և ՀՄԿՄՎԾ-ը, ուրիշների թվում, ճանաչվել են, որպես բարձր միջազգային ստանդարտներին համապատասխանող: Ի լրումն, ՀԱՊԽ-ը ճանաչում է համայնքի համար պոտենցիալ դրական ազդեցությունները:<br>Այդուհանդերձ, ՀԱՊԽ-ը գտնում է, որ նախագծի տեխնիկական կառուցվածքի փոփոխությունը 2013թ.-ից հետո հանգեցրել է Գնդեվազի բնակիչների վրա պոտենցիալ ազդեցությունների նշանակալի աճին: Այս փոփոխությունները պահանջում են քաղաքի և նրա բնակիչների վրա նախագծի տարբեր բաղադրիչների միավորված կամ կումուլատիվ ռիսկերը և ազդեցությունների գնահատումը — դրա հետ կապակցված խոհրդակցությամբ, մեղմացման և մշտադիտարկման միջոցառումներով, ի լրումն նրանց, որոնք կան ընթացիկ ԲՍԱԳ-ում:<br>ՀԱՊԽ-ը նաև թերություններ է գտնում ՄՖԿ-ի ուղղորդման մեջ կապված Կատարողականության չափորոշիչների հետ, այն առումով, որ դա մանրամասն չի խոսում այն մասին, թե ինչպես պետք է երաշխավորել, որ մի ամբողջական և ինտեգրված գնահատում նախաձեռնվի նախագծի միավորված կամ կումուլատիվ սոցիալական ազդեցությունների նկատմամբ: |
| Խոհրդակցության և մասնակցության գործընթացների համապատասխանությունը, հանրային լսումներին մտահոգ շահագրգիռ կողմերի մասնկացության մատչելիությունը, և մտահոգությունները, առ այն արդյոք բողոքները համապատասխանաբար են գրանցվել կամ հասցեագրվել | <u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ի կողմից խոհրդակցության հետ կապված նախաներդրումային վերաքննության հարցերի գնահատումը համարժեք չի եղել ռիսկին:</u><br>ՄՖԿ-ն չի մտցրել ԲՍԳԾ-ի մեջ բավարար պահանջներ (վերջնաժամկետներ, համապատասխան փորձագիտության կարիք, փաստաթղթեր, և զեկուցագրեր), որպեսզի երաշխավորի ՀԽՀԾ-ի իրականցման համատեղելիությունը ԿՉ1-ի պահանջների հետ: |
| | <u>ՀԱՊԽ-ը այսպիսով գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխանել է հաճախորդի համայնքային մասնակցության և խոհրդակցության գործունեության առնչությամբ իր վերահսկման պահանջներին:</u><br>Սակայն, ՄՖԿ-ն ճանաչեց հաճախորդի Կատարողականության թերությունները իր վերահսկման ընթացքում և աշխատեց հաճախորդի հետ նրան համապատասխանության բերելու համար: Այս ենթատեքստում, ՀԱՊԽ-ը նշում է, ՄՖԿ-ի դերը հաճախորդի խոհրդակցական գործունեությունը ընդլայնելու կարիքը շեշտադրելու մեջ: ՀԱՊԽ-ը նաև նշում է, ՄՖԿ-ի դերը շրջանառվող տեղեկատվության որակի մասին հարցեր |

| | |
|---|---|
| | բարձրացնելու մեջ և արտաքին օժանդակություն օգտագործելու միջոցով կարողությունների բարելավում պարտադրելու մեջ: |
| | <u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն կատարել է ադեկվատ քայլեր հաճախորդի անհամաձայնությունների լուծման գործընթացների համապատասխանությունը ԿՉ1-ի պահանջների հետ երաշխավորելու համար:</u><br>Թեև ՀԱՊԽ-ը նշում է, որ ՄՖԿ-ն պետք է ավելի պրոակտիվ լիներ, որպեսզի դրանով երաշխավորեր բոլոր հեռանկարների ներգրավումը և արձագանքը բոլոր հեռանկարներին, ՀԱՊԽ գտնում է, որ ՄՖԿ-ի վերահսկումը ցուցադրեց ՄՖԿ-ի բացթողումը ընկերության անհամաձայնությունների լուծման մեխանիզմի համապատասխանության նկատմամբ, երբ ՀԿՀ-ներ ստեղծվեցին և ՀԿՊ վարձվեց: ՄՖԿ-ն խորհրդատվություն տվեց հաճախորդին կապված ՀԿՊ-ի գործառույթի հետ և երաշխավորեց, որ ՀԿՀ-ները արդյունավետ մեխանիզմ լինեն, որպեսզի մշակութային տեսակետից համապատասխանեն և գործեն ի լրումն ֆորմալ գործընթացի: |
| | <u>ՀԱՊԽ-ը գտնում է, որ ՄՖԿ-ն համապատասխան քայլեր նախաձեռնել է հաճախորդին վերահսկելու և ուղղորդելու համար՝ ԲՍԱԳ-ի գործընթացի շուրջը խոհրդակցությունը և շահագրգիռ կողմերի մասնակցությունը ապահովելու նպատակով:</u><br>ՀԱՊԽ գտնում է, որ իր բազմակի խոհրդակցական գործողություններով ՄՖԿ-ն աշխատել է հաճախորդի հետ, որպեսզի երաշխավորի շահագրգիռ կողմերի արտահայտած մտահոգությունների ընդգրկումը ԲՍԱԳ գործընթացի մեջ և դրանց ներառումը վերջնական ԲՍԱԳ-ում, մասնավորապես, ՀԱՊԽ-ը նշում է, որ խոհրդակցության գործընթացում բարձրացված բնապահպանական մտահոգությունները, նկատվել և հասցեագրվել են ԲՍԱԳ-ի մեջ, ինչպես ներկայացվեց VII.A.1. հատվածում: |